

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՑ ԵՎ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն Գարեգին Երկրորդ, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, սիրեցյալ և լծակից եղբայր ի Քրիստոս Աստված,

Շնորհը և խաղաղությունը Հայր Աստծու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի թող լինի Քեզ հետ:

Մեծ ուրախությամբ տեղեկացանք Ձեր՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու մասին: Քրիստոնեական սիրո ոգով մեծապես ակնկալում ենք եղբայրական կապերի շարունակություն և խորացում մեր հնագույն Քույր Եկեղեցիների միջև, ինչպես այն գոյություն ուներ Ձեր երջանկահիշատակ նախորդի՝ Գարեգին Ա-ի օրոք:

Կրելով Գարեգին անունը՝ շարունակեք արժանավորապես հետևել Ձեր նախորդի քայլերին՝ առաքյալի նման ազդարարելու բարի լուրը որպես հովիվ, որ իր անձն է դնում իր հոտի համար, և որպես սիրող մարդ, որ

գրկաբաց կարող է ընդունել ողջ մարդկությանը: Սրանք հատկանիշներ են, հավատացած ենք, որոնցով կբնորոշվի Ձերդ Սրբազնության, իբրև Ծայրագույն Պատրիարքի, գահակալության շրջանը:

Արդ, ողջունելով Ձեզ, սիրելի եղբայր ի Տեր, սպասում ենք այն պահին, երբ կկարողանանք անձնապես խաղաղության համբույր փոխանցել՝ մնալով խորին հարգանոք և հատուկ սիրով ի Քրիստոս:

Ձեր սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Տեր,

Ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը՝ 1999 թ. հոկտեմբերի 27-ին ԱԵԺ-ում Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Կիսելով մեծ ուրախությունը դարավոր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, որն ի դեմս Ձերդ Սրբության ունի արժանավոր Հովվապետ, այսօր ի սրտե աղոթում ենք՝ ցանկանալով Ձեզ Աստծու ամենազոր օգնությունը Մեծ և Աստվածային Հովվապետ Հիսուս Քրիստոսի կամքով Ձեզ հանձնված քահանայապետական դժվարին ծառայության և համայն հայության կողմից Ձեզ վստահված բարձր և պատասխանատու հանձնառության մեջ, որպեսզի «տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. Ե 16):

Այս հանդիսավոր օրը մեծ սիրով ջերմեռանդ աղոթք ենք վերառաքում առ Բաշխողն ամենայն բարյաց, որպեսզի Ձեր ծառայությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն լինի բարեբեր ու արգասավոր:

Հղելով մեր շնորհավորանքները Ձերդ Սրբությանը՝ լիահույս ենք, որ Ձեր ծառայությունն Աստծու օգնականությամբ ոչ միայն կշարունակի, այլև կամրապնդի մեր Եկեղեցիների և ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարիդրացիական հարաբերությունները:

Ի սրտե ողջունում ենք Ձերդ Սրբությանը և Ձեզ համար վերստին հայցում Աստծուց քաջառողջություն, ամենայն բարիք՝ ի պայծառություն դարավոր Հայ Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայրենիքի: Թող Աստծու ողորմությունը մշտապես ուղեկցի Ձերդ Սրբությանը՝ հարատևորեն գոտեպնդելով Հայրապետական Ձեր ծառայության մեջ:

«Միակ Աստծուն և մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը, փառք, մեծություն, զորություն և իշխանություն՝ բոլոր ժամանակներից առաջ և այժմ և բոլոր ժամանակներում: Ամեն» (Հուդ. Ա 25):

Եղբայրական սիրով ի Տեր՝

ԱԼԵՔՍԻՅ Բ
Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսիոյ

ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ - ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Մեծ ուրախությամբ ստացանք Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու լուրը: Հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու և ինձ ի սրտե շնորհավորում ենք Մայր Աթոռի գահակալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Վստահ ենք, որ մեր երկու Եկեղեցիների ու ժողովուրդների ավանդաբար շարունակվող բարեկամությունը Ձեր գահակալության օրոք էլ ավելի կբարգավաճի ու կամրապնդվի:

Մաղթում ենք քաջառողջություն և պատրիարքական երկարամյա ու արդյունավետ սպասավորություն:

Եղբայրական սիրով՝

ԻԼԻԱ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի սիրեցյալ անդամներ,

Ռումին Եկեղեցին, հոգևորականությունը և հավատացյալները մեծ և անխառն ուրախությամբ Սուրբ Էջմիածնից ստացան Ձերդ Սրբության՝ Ամենայն Հայոց դարավոր ու Սուրբ Աթոռի Հովվապետ ընտրվելու օրհնյալ լուրը: Մեր Եկեղեցիների ավանդական հարաբերությունները, հավատքի մեջ սերտ մտերմությունը, Հայ և Ռումին սպասավորների ու հավատացյալների քրիստոնեական բարեպաշտությունը քաջ հայտնի են ամենքիս:

Եղբայրական գործակցության այս ոգով Ձեր Հայրենիքի և ժողովրդի համար օրհնյալ այս պահին, հանուն Ռումին Ուղղափառ Եկեղեցու, մեր առաջնորդների, հոգևոր դասի և հավատավոր ժողովրդի, ցնծությամբ գոհաբանություն ենք մատուցում Աստծուն՝ իր անսահման գթասրտության համար, և շնորհավորում Ձերդ Սրբությանը՝ Հայոց Եկեղեցու Գահակալ ընտրվելու բացառիկ առիթով:

Լի են մեր սրտերը եղբայրական զգացումներով և հոգևոր խնդությամբ; որով միանում ենք Ձերդ Սրբությանը, Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր առաջնորդներին, հոգևորականությանը և հավատացյալներին, ովքեր իրենց նախահայրերի օրինակով Աստվածաշնչյան Արարատի ճերմակահեր Հայրենիքում, ի գին բազում զոհողությունների և անօրինակ տոկունության, շարունակում են վկայել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ աշխարհին ընծայած հավատքն ու ճշմարտությունը:

Ձերդ Սրբություն, Հայ Եկեղեցու Հայրապետների հետ երջանկահիշատակ մեր նախորդների և անձամբ մեր եղբայրական ավանդական հարաբերությունները ամրապնդվել և քրիստոնեական սիրո ու կյանքի արտահայտություն են ստացել փոխադարձ այն այցելությունների շնորհիվ, որոնք Ձեզ քաջ հայտնի են:

Ուղղափառ և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսությունը, որի նախաձեռնության մեջ կարևոր ներդրում են ունեցել Ռումին Ուղղափառ և Հայ Եկեղեցիները, հաստատում է մեր՝ Ընդհանրական

Ուղղափառ Եկեղեցու մեծ ընտանիքի մեջ միավորվելու միասնական ցանկությունը:

Անխառն բերկրանքի այս պահին վստահ ենք, որ կամոքն Աստծո ընտրված Ձերդ Սրբությունը, իբրև Հայ Եկեղեցու նոր Հայրապետ, փրկության ճանապարհին նախանձախնդրությամբ կառաջնորդի հավատացյալ Իր հոտին և նույն ոգով կշարունակի Իր նախորդների օրհնյալ գործը:

Լիահույս ենք, որ հետայսու Հայ Եկեղեցու հոգևոր փորձառությունը ժամանակի փորձությունների հորձանուտում առավել կհարստանա ու կզորանա, և առ Աստված հավատքին խարսխված իմաստությունը կդիմագրավի մարդկության կենցաղի աշխարհայնացման միտումները:

Վստահեցնում ենք Ձերդ Սրբությանը, որ Ռումին Ուղղափառ Եկեղեցին աղոթում է Ձեր և Մեր Եկեղեցիների ու եղբայրական երկու ժողովուրդների ի Քրիստոս միության և ավանդական բարեկամության զորացման համար:

Թույլ տվեք հանուն Ռումին Ուղղափառ Եկեղեցու, Սուրբ Սինոդի, հոգևորականության և ռումին հավատացյալների Ձեզ հղել քաջառողջության, արևշատության և արգասաբեր ծառայության մեր լավագույն բարեմաղթանքները՝ ի բարօրություն համայն հայ ժողովրդի, ի փառս Աստծու և ի գոհություն Ամենասուրբ Երրորդության:

Եղբայրական ողջագուրանքով և Ձեր ծառայության մեջ լիարժեք հաջողությունների լավագույն մաղթանքներով՝

ԹԵՈԿՏԻՍՏ
Պատրիարք Ռումին Ուղղափառ Եկեղեցու

ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՅԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

Ս. Էջմիածին, Կաթողիկոսարան

Սիրելի եղբայր ի Քրիստոս,

Հայ Առաքելական Եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման հանձնախմբի անդամ Նաթան եպս. Հովհաննիսյանի՝ մեզ հղած հոկտեմբեր 27, 1999 թ. N 1836 նամակից տեղեկացանք Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու մասին: Մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձեզ, ինչպես նաև ԱԵԺ-ի պատգամավորներին, Հայ Եկեղեցու զավակներին՝ նման կարող առաջնորդ ընտրելու առթիվ:

Աղոթքներով ու բարի մաղթանքներով՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԸՆՏՐՅԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ի սրտե ողջունում եմ Ձեզ հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Եթովպական Ուղղափառ Ավտոկեֆալ Եկեղեցու և իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Խորապես ցավակցում եմ և ԱԺ-ում ահաբեկչությանը զոհ դարձած պետական այրերի սպանության համար: Մեր ցավակցություններն ենք հայտնում նաև զոհվածների ընտանիքներին՝ Աստծուց հանգուցյալների հոգիներին հանգստություն հայցելով:

Եղբայրական սիրով՝

ԱԲՈՒՆԱ ՊԱՈՒԼՈՍ
ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱԼԱՆԿԱՐԱ ԱՄՈՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔՈԹԱՅԱՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՍԻԼԵՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ ԵՐԿՐՈՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Անկեղծ ուրախությամբ և գոհունակությամբ փառք ենք տալիս Աստծուն և ողջունում Զերդ Սրբությանը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն Հովվապետ օծվելու հանդիսավոր արարողության առիթով:

Երախտագիտությամբ ենք հիշում Ձեր երջանկահիշատակ նախորդի հոգևոր ինքնօրինակ նկարագիրը:

Մեծ էր մեր ցանկությունը ի պատասխան Ձեր ջերմ հրավերի, այդ պահին լինել Ձեր կողքին, սակայն որոշ հանգամանքներ այժմ թույլ չեն տալիս մեզ երկար ճանապարհորդություններ կատարելու: Վստահեցնում ենք Ձեզ, որ մենք հոգեպես ներկա ենք եղել և մեր խոնարհ աղոթքներում հիշում ենք Զերդ Սրբությանն ու համայն հայ ժողովրդին:

Լիահույս ենք, որ Զերդ Սրբության հոգևոր առաջնորդությունը մեծ օրինություն է լինելու միմյանց հետ հաղորդության մեջ գտնվող Արևելյան Ուղղափառ բոլոր Եկեղեցիների, ինչպես նաև այն Եկեղեցիների համար, որոնք ճշմարիտ միություն են փնտրում ի Քրիստոս՝ ի Տերն մեր:

Նոր հազարամյակի շեմին մենք պետք է առավել արգասաբեր եղանակներով արտահայտենք մեր միությունը, որպես Աստծու գթասրտության դրսևորում չքավորության, անարդարության, դաժանության և պատերազմների աշխարհում ապրող մարդկության նկատմամբ:

Թող Սուրբ և Փառավորյալ Երրորդության օրհնությունները լինեն Զերդ Սրբության և Հայաստանի համայն հոգևորականության և ժողովրդի հետ: Թող մեր Փրկիչ Քրիստոս Իր Արքայության փառքի համար միշտ սիրո մեջ պահի մեզ:

ԲՈՒԼՂԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Զերդ Սրբություն,

Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդի և իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ, ցանկանում քաջառողջություն, երկար տարիների գահակալություն և Հայ Եկեղեցուն՝ բարգավաճում:

Սիրով ի Քրիստոս՝

ՄԱՔՍԻՄ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵՎ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Զերդ Սրբություն,

Լեհական Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցու և մեր անունից ի սրտե շնորհավորում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Թող Ամենակարող Տերն օրհնի Զերդ Սրբությանը ի սեր Քրիստոսի մատուցած ծառայության մեջ:

Սիրով ի Քրիստոս՝

ՍԱՎՎԱ
ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՎԱՐՇԱՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ
ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Կաթողիկոսարան

Զերդ Սրբություն,

Մեծ ուրախությամբ ստացանք Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու լուրը: Թե՛ որպես համայն Անգլիո առաջնորդ և թե՛ որպես անգլիական համայնքի նախագահ՝ ջերմագին ողջունում ենք Ձերդ Սրբությանը:

Մեծ ցավով տեղեկացանք ՀՀ պետական բարձրաստիճան մի քանի պաշտոնյաների եղերական սպանության մասին:

Բազում տարիներ Անգլիական Եկեղեցին վայելել է Հայ Եկեղեցու հետ սերտ հաղորդակցության հաճույքը: Վստահ ենք, որ Ձեր կարող առաջնորդության ներքո այս հարաբերությունները էլ ավելի կամրապնդվեն:

Հիշում ենք տարիներ առաջ մեր առաջին այցելությունը Հայաստան և աղոթում ծանր այս պայմաններում Ձեր ստանձնած բարձր և պատասխանատու ծառայության հաջողության համար: Աղոթում ենք նաև Ձեր Եկեղեցու և ժողովրդի համար, քանզի, իբրև աշխարհի առաջին քրիստոնյա պետություն, պատրաստվում եք տոնախմբել Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը:

Սիրով ի Քրիստոս՝

ՋՈՐՋ ՔԵՐԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԱՐԵԼԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Զերդ Սրբություն,

Ջերմորեն ողջունում եմ Ձերդ Սրբությանը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ և օրհնություն խնդրում Տիրոջից Ձեզ համար՝ վստահված վեհ առաքելության ճանապարհին:

Սիրով ի Քրիստոս՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԵԼԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Չերդ Սրբություն,

Մեծագույն գոհունակությամբ փեղեկացանք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովի կողմից Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսի ընտրության արդյունքներին:

Սուրբ Հոգու առաջնորդող լույսով Աստված ընտրեց Չերդ Սրբությանը որպես Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպեսզի Չեր ժողովրդին առաջնորդեք դեպի խաղաղության և փրկության նավահանգիստ:

Մեր աղոթքն է, որ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս պարգևի Չեզ առողջություն, աստվածային լույս և երկար տարիների կյանք՝ ի ծառայություն Իր ժողովրդի՝ վասն փառաց անվան Յուրո և վասն Սուրբ և Ուղղափառ Իր Եկեղեցու:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՊԵՏՐՈՍ VII
Պապ-Պատրիարք Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի
Հույն Ուղղափառ Եկեղեցու

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՄՈԼԵՆՍԿԻ ԵՎ ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս. Էջմիածին, Հայաստան

Չերդ Սրբություն,

Մոսկվայի Պատրիարքության արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի և իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Աղոթում ենք առ Ասպված, որպեսզի Քահանայապետը՝ Քրիստոս, հովվապետական Ձեր առաջիկա գործունեության մեջ զորացնի Ձեզ: Վստահ ենք, որ Ձեր հովվապետության ներքո մեր երկու Եկեղեցիների ու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունները էլ ավելի կամրապնդվեն:

Մեր աղոթքներն ենք վերառաքում առ Ասպված՝ հայցելով Բարձրյալից հաջողություն և երջանկություն հովվապետական Ձեր բարձր սպասավորության մեջ:

Սիրով ի Քրիստոս՝

ԿԻՐԻԼ

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՍՄՈԼԵՆՍԿԻ ԵՎ ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԻ,
ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՄԱՅՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Մեծագույն ուրախությամբ Ձեզ եմ հղում Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդների, հոգևորականաց և աշխարհականաց ջերմագին մաղթանքներն ու աղոթքները Ձեր՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք ընտրության և գահակալության առիթով:

Թող Ձեր քահանայապետական ծառայությունը մեր Տեր Ասպված և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանին լինի առավել արգասաբեր: Թող Ասպված պարգևի Ձեզ նվիրյալ և բարի ծառայության երկար տարիներ:

Սիրով ի Քրիստոս՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ

Մետրոպոլիտ Համայն Ամերիկայի և Կանադայի

ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Յանուն Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Նուիրապետութեան, սրտանց կը ներկայացնենք Ձեզի մեր շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները՝ Ձեր ընտրութեան առթիւ իբր գահակալ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին:

Մեր մաղթանքին հետ կ'ուղղենք մեր աղօթքն առ բարձրեալն Աստուած որպէսզի, յատկապէս այս դժուարին պարագաներուն մէջ, ուր կ'ապրի մեր Հայրենիքը, Դուք հանդիսանաք խաղաղութեան, սիրոյ և համերաշխութեան առաքեալը և հովուէք իմաստնօրէն ու արիաբար Ձեզի յանձնուած հօտը:

Մեր կողմէն, ինչպէս այլ առիթներով յայտնուած է Ձեզի մեր նախորդին՝ Ամեն. և Գերերջ. Տ. Յովհաննէս Պետրոս ԺԸ Կաթողիկոս-Պատրիարքին և Նուիրապետութեանս այլ անդամներուն կողմէ, զանց պիտի չընենք ամէն ջանք ի գործ դնելէ, որպէսզի յարաբերութիւնները մեր երկու Եկեղեցիներուն միջև՝ ըլլան տևապէս ներշնչուած եղբայրական ու շինարար՝ աւետարանական հոգիէ, և տան վկայութիւնը մեր միասնականութեան՝ ի շինութիւն հաւատացեալ ժողովուրդին, ի բարգաւաճումն մեր Հայրենիքին և ի փառս Աստուծոյ:

Եղբայրական սիրոյ ողջունիւ և աղօթքի միութեամբ՝

ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

ԵՎՐՈՊԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Սրբացանք Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու լուրը և, որպես Եվրոպայի Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսաց խորհրդի նախագահ, հանուն ինձ և իմ եպիսկոպոս եղբայրների նախ հայտնում եմ իմ ուրախությունը, ինչպես նաև աղոթական խորին միությունը՝ Ձեր Հայրենիքի և Եկեղեցու համար: Նման կարևորագույն ծառայության կոչվելու առիթով երջանկությունն եմ ունեցել հանդիպելու Գարեգին Ա Կաթողիկոսի հետ: Նորին Սրբության հետ ունեցած մեր զրույցը հույս է ներշնչել մեզ Եվրոպայում Արևելյան և Արևմտյան Եկեղեցիների միության հարցում:

Հավատում եմ, որ Աստված մեր այս ճանապարհին հովանավորում է մեզ, որով կկարողանանք մոտ ապագայում հանդիպել՝ շարունակելու մեր երկխոսությունը:

Կենդանարար Սուրբ Հոգին թող Ձեզ ուժ շնորհի՝ սկսելու այս նոր սպասավորությունը Ձեր Հայրենիքի համար նման դժվարին պահին:

Եղբայրական միությամբ ի Հարուցյալ Փրկիչն մեր՝

ՄԻԼՈՍԼԱՎ ԿԱՐԴԻՆԱԼ ՎԸԼԿ
ՊՐԱԳԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԵՎՐՈՊԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՉԻԿԱԳՈՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհավորում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Խորապես ցավում եմ, որ, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ձեր անդրանիկ աղոթքը եղավ հոկտեմբերի 27-ին Ազգային Ժողովում զոհված պետական այրերի հոգիների հանգստյան համար:

Չիկագոյի էկումենիկ և միջեկեղեցական գործերի մեր գրասենյակը բազմաթիվ էկումենիկ համաժողովներում համագործակցել է Արեն սրկ. Ջերեջյանի հետ: Հուսով եմ, մեր բարեկամությունը Հայ Եկեղեցու հետ այսուհետ ևս կշարունակի ընդլայնվել և զարգանալ: Աղոթում ենք, որ Աստված օգնական լինի Ձեզ այս նոր և պատասխանատու պաշտոնավարության մեջ՝ հայցելով նաև Ձեր աղոթքները մեր բարօրության համար:

Անկեղծորեն ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ ՋՈՐՋ ՖՐԱՆՍԻՍ
ՉԻԿԱԳՈՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱՐՈՆԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Սրտանց շնորհավորում եմ այն բարձր կոչման համար, որին Տերը արժանացրեց Ձեզ՝ Ձեր հոգածությանը հանձնելով այն Եկեղեցու հովվությունը, որի ակունքները հասնում են մինչև քրիստոնեության առաջին օրերը:

Հուսով ենք, որ Ձեր գահակալության շրջանում ևս մեր քույր Եկեղեցիների եղբայրական կապերը կշարունակեն ընդլայնվել ու ամրապնդվել ի շահ մեր երկու ժողովուրդների:

Տիրոջից հայցում ենք երկար և բեղմնավոր կյանք Ձերդ Սրբությանը:

ՆԱՄՐԱԼԼԱՀ - ԲՈՒՏՐՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՍՖԵՅՐ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ՄԱՐՈՆԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցու համար գոհաբանության հատուկ օր է: Աշխարհասփյուռ հայության հոգևորականաց ու աշխարհականաց դասը հավաքվել է Սուրբ Էջմիածնում՝ մասնակցելու Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի օծման արարողությանը:

Ձեր գահակալությունը ևս մեկ անգամ վկայում է Հայոց Եկեղեցու հոգևոր կենսունակության մասին, որով Նա շարունակում է խոստովանել քրիստոնեական հավատքը՝ հակառակ մարդկության պատմության ընթացքում հարուցված խոչընդոտների: Այն նաև հիշեցնում է մեզ ոգեկոչել Ձեր բոլոր նախորդների հիշատակը, հատկապես Նորին Սրբություն Գարեգին Ա-ի, ում քաջածանոթ էինք էկումենիկ շարժման մեջ:

Արարատյան թեմում Ձեր դրսևորած նվիրումը և Ձեր հովվական նվաճումները Հայաստանում կոմունիստական հասարակարգի տարիներին և դրանից հետո՝ մեզ քաջ հայտնի են: Դա մի օրինակ է, թե ինչպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հակասովածյան մթնոլորտում արտահայտեց իր առաքելության կոչումը:

Ձերդ Սրբություն, Սուրբ Հոգին այժմ Ձեզ կոչում է հսկելու, «հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արյունով»: Մենք աղոթում ենք, որ Իր փառքը «բարձրացնի և ձեզ ժառանգություն տա բոլոր սրբերի հետ» (Գործք. Ի 28, 32):

Հայաստանի ժողովրդի հետ ցնծում ենք նաև մենք՝ Ձերդ Սրբության ընտրության և գահակալության առիթով, և դարձյալ Հայաստանի ժողովրդի հետ սգակցում և խորապես ցավում ենք՝ Ձեր ընտրությանը համընկած ողբերգական իրադարձությունների համար: Սա պարզորոշ ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի Հայոց Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, նաև հավաստում, թե որքան ծանր է խաչը, որը Ձերդ Սրբությունը պիտի կրի իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը և էկումենիկ համայնքը պատրաստ են զորավիգ լինելու Ձեզ այս դժվարին ճանապարհորդության ամբողջ ընթացքին:

Սիրով ի Քրիստոս՝

ԴՈԿՏ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅՋԵՐ
ԵՀԽ-ի Գլխավոր Քարտուղար

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հանուն Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի (CEC) ողջունում եմ Ձեզ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի, թագավորաց Թագավորի և տերանց Տիրոջ անունով՝ Իր միջոցով աղոթելով բոլորիս Հորը, որ Դուք զարդարվեք առատաբաշխ Սուրբ Հոգու բոլոր շնորհներով:

Մեծագույն բավականությամբ ընդունեցինք Ձեր, որպես Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, ընտրության լուրը: Հայ Առաքելական Եկեղեցին, իր դարավոր և հավատքով լեցուն վկայության ու ծառայության հարուստ ավանդությամբ, մեծագույն փառապանքների մեջ հավատքի իր խորը փորձառությամբ, Սփյուռքի աչքերով ողջ աշխարհին նայող իր հայացքով, առանձնապես թանկ է ԵԵԽ-ի ընկերակցության համար: Մեզ համար թանկ է Ձեր նախորդի՝ ի Քրիստոս սգացյալ և սիրեցյալ Գարեգին Ա-ի օրինյալ հիշատակը: Մենք մեծապես գնահատում ենք Ոսկան արքեպիսկոպոս Գալփակյանի ներկայությունը մեր Կենտրոնական Կոմիտեում: Եղբայրական սիրո ճշմարիտ հոգով Ձեզ ենք հղում մեր շնորհավորանքները՝ աղոթքով, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջնորդի բարձրագույն և սուրբ պատասխանատվությունը կրելիս Աստծու իմաստությունը, զորությունն ու ներկայության գիտակցությունն առատանա Ձեր հոգում: Մենք մեծ սպասումով առիթ ենք փնտրում Ձեզ հետ հանդիպելու և ԵԵԽ-ի էկումենիկ ընտանիքում մեր անձնական ընկերակցությունը կիսելու:

Ձեր ընտրության լուրն ստանալուն համաժամանակ հրապարակված հաղորդագրությունից տեղեկացանք Հայաստանի Խորհրդարանում տեղի ունեցած ոճրագործության մասին: Ի Քրիստոս մեր խորին ցավակցություններն ենք հայտնում համայն հայ ժողովրդին, որը ցնցված է ահաբեկչական սահմռկեցուցիչ այս գործողությունից՝ աղոթքի մեջ արտահայտելով մեր համերաշխության ոգին: ԵԵԽ-ի հաստատուն համոզումն է, որ լարվածության ոչ մի կացություն կամ միջադեպ չի կարող արդարացնել նման բռնարարքի կիրառությունը: Խորհրդանշական է, որ Դուք այսպիսի դժվարին ժամանակահատվածում Աստծուց կոչվեցիք՝ Հայոց Եկեղեցին առաջնորդելու: Մենք աղոթում ենք Ձեր և համայն հայ ժողովրդի համար:

Ձերդ Սրբություն, ընդունեցեք եղբայրական ուրախության և զորակցության, ինչպես նաև ի սեր Քրիստոսի մեր գործակցության խորացման հույսի հավատիքները:

«Հավատարիմ է Աստված, որից կանչվեցիք հաղորդակից լինելու նրա Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (Ա Կորնթ. Ա 9):

Լավագույն բարեմաղթանքներով, ի Քրիստոս սիրով՝

ԴՈԿՏ. ԿԵՅԹ ԿԼԵՄԵՆՏՍ
ԵԵԽ-ի Գլխավոր Քարտուղար

ՈՒՓՍԱԼԱՅԻ ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս. Էջմիածին, Հայաստան

Շվեդական Եկեղեցու և իմ անունից ջերմագին ողջույններ եմ հղում Ձեզ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Թող Տերը Ձեր կյանքի և ծառայության ողջ ընթացքում ուղեկցի Ձեզ, ինչպես մարգարեն է ասում. «Մի՛ վախեցիր, որովհետև փրկեցի քեզ և կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես: Եթե ջրերի միջով անցնես՝ քեզ հետ կլինեմ, և գետերը քեզ չեն խեղդի. եթե կրակի միջով անցնես՝ չես այրվի, և նրա բոցը քեզ չի կիզի. քանզի ես եմ քո Տեր Աստվածը՝ Իսրայելի Սուրբը, որ պիտի փրկեմ քեզ» (Եսայի ԽԳ 1-3):

Սիրով ի Քրիստոս՝

ՀԱՄՄԱՐ
ՈՒՓՍԱԼԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հղում ենք Ձեզ մեր աղոթքներն ու ողջույնները Ձեր՝ Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Թող Աստված օրհնի Ձեզ և զորացնի Ձեզ՝ Ձեր կարևոր ծառայության մեջ:

12 ամիսներ առաջ կինս՝ Հիլարին, և ես մեծ շնորհ ունեցանք առաջնորդելու քրիստոնյաների մի փոքրիկ խումբ, բաղկացած անգլիկանների, կաթոլիկների և Միավորված Եկեղեցիների անդամներից, Հայաստան՝ մեկ շաբաթ անցկացնելու:

Մեր այցի կարևոր դրվագներից մեկն այն էր, որ հնարավորություն ունեցանք մասնակցելու Սուրբ Պատարագին Ս. Էջմիածնում Ձեր միաբանության հետ և մի երիտասարդ հայորդու ուղեկցությամբ գնացինք Եղեռնի հուշարձան և թանգարան: Հրաշալի շաբաթ էր, և բոլորս հեռացանք սիրով՝ Ձեր երկրի նկատմամբ և խորին հարգանքով՝ հանդեպ Ձեր Եկեղեցին ու նրա պատմությունը:

Այստեղ՝ Ավստրալիայում, ունենք շատ ջերմ բարեկամություն Ձեր Աղան Արքեպիսկոպոսի հետ, իսկ Վիկտորիայում, ինչպես նաև Սուրբ Մարիամի միաբանության Սըրեյ բլրի վրա՝ Տեր Հակոբի հետ:

Կիսում ենք նրանց և Ձեզ հետ Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած դեպքերի ցավը և աղոթում, որ վերականգնվի կյանքի բնականոն ընթացքը:

Սույն նամակով հայտնում ենք Ձեզ մեր աղոթքները և լավագույն բարեմաղթանքները Ձեր ծառայության համար ինչպես Ձեր ժողովրդին, այնպես էլ ընդհանրապես քրիստոնյա համայնքին առաջիկայում:

Մենք երջանիկ էինք ճանաչելու Ձեր նախորդին և ընձեռված մի շարք առիթներով մեզ հարստացած էինք զգում իր կողքին մեր ներկայությամբ: Գիտենք, որ Դուք շատ զբաղված պիտի լինեք մոտ ապագայում, բայց ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել, որ անհամբեր սպասում ենք այն պահին, երբ Դուք առիթ կունենաք շնորհ անելու մեզ Ձեր այցելությամբ, և գոհ կլինենք, եթե էկումենիկ այց կատարեք այստեղ՝ Վիկտորիա:

Գիտենք, որ 1700-ամյակին նվիրված ծրագրերը լավ մշակված են, և աղոթում ենք, որ դրանք ամենուր ապացույցը դառնան գերագույն օրհնության և վերանորոգման Ձեր երկրի և Ձեր ժողովրդի համար:

Անկեղծ ողջույններով ի Քրիստոս՝

ՊԱՏՎԵԼԻ ՀԱՄԻԾ ՔՐԻՍՏԻ-ՋՈՆՍՈՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ